



ԲԱԶՄԱՎԵՊ

ՈՅԺԸ · 1869 — ԳՍԱՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ · — ՄԱՐՏ

ՆՇՄԱՐՔ ԵՒ ՆՇԽԱՐՔ

Ի Հայաստան Աշխարհի.

Ա. Իմազգակցաց շատերուն նման, մեր հին հայրենի երկրէն շատ հեռու՝ օտար ափանց վրայ ծնած, (թէպէտև գեղեցիկ ծովածիծաղ ափանց վոսփորոնի), երկար տարիներ փափագէի այց ելլելու կամ ուխտի երթալու յաշխարհ մեր Հայաստան, և ականատես ըլլալու հարանց ու պապանց յիշատակարանաց, շինից և շիրմաց: Անցան այն շատ տարիներն. անցան շատ բաներ գլխէս և սրտէս, և զեռ հոն կը մնար հին փափագս. նման այն տերեմին՝ որ թէ և իր դալարութիւնը կորուսեր թոռմեր խամրեր է, բայց բարերար ջրի մը մէջ ձգուելով՝ նորէն չափաւոր դալարութիւն մը կ'առնու, գուցէ խնկանման հոտ և համ մ'ալ ունենայ: — Ուուսաց և օսմանեան դաշնակցաց պատերազմէն վերջն էր, երբ անգամ մ'ալ բնութեան նորոգող եղանակն հասաւ, նորէն զգացի ես ալ զգարուն. բայց այս անգամ՝ այն ալ զգացի՝ որ ես այսուհետեւ հասակիս

գարնան վերջերն եմ. գուցէ տուողն կենաց՝ պարզեց ինծի շատ գարուններ ալ տեսնել, բայց կեանքն որչափ ալ երկար ըլլայ՝ մէկ գարուն միայն ունի. և որչափ ալ վառի սրտի կրակարանն՝ գոնէ դրսի պատեանն երթալով կը պաղի, կը տկարանայ. թեթև տարիներու տեղ կուգան ծանրերն, և ուսոց վրայ նստած՝ դժուարաշարժ կ'ընեն զմարդ, և որչափ ալ ասդիս անդիննայի՝ աւելի դէպ'ի վար կը հակեն գլուխը: Գուցէ ինծի ալ նըստելու տարիներ դեռ ըլլան, բայց պտըտելու՝ շատ չեն կընար ըլլալ — բաւական մտածելէն ետև ելայ՝ ի գործ. առի ցուպս, մախաղս և խնայութեան քաշկիկս. քանի մը զիրք, աշխարհացոյց մը, և լուսանկար գործիք մ'ալ, որպէս զի պտըտելու տեղերէս քանի մը յիշատակ ալ բերեմ և ընծայեմ բարեկամաց և հայրենասիրաց: Զգանելով օդնական և ընկեր մը՝ ստիպուեցայ ինքնիրմովս բաւականանալ, և չուշանալ հրաբերան և

մոխրամատն հայրենասիրաց դռներու քով։ Ըսի, փութամ երթամ տեսնելու զհայրենիս, թէպէտ և ոչ զընդարձակութիւն հայաստան աշխարհի, գոնեա մէկ մաս մը. և գամ ըսեմ՝ թէ տեսայ. և տեսածիս, կամհեռուէն ու մօտէն նշարածիս՝ նշխարքն ալ ցուցընեմ։ Արդեօք մինչև ուր պիտի կարենամերթալ. մինչև ուր տանիլ իմ հետևող (ընթերցող)։ որ սահմանի վրայ պիտի կարենամցըցել ցուպս։ ի՞նչ պէտք է հիմայ գիտնալ կամ վարանիլ. Աստուած է առաջնորդ ամեն ճամբու. կարճ կամերկայն՝ ինքն դիտէ վախճանը. ուր որ կէտը դրած է՝ այն է մեր անծանօթ նպատակն. կէտէ կէտ ամբողջ ընթացք մ'է։ Բաւական սեպեմ նաև եթէ կոխեմ հայկական հողը, և շնչեմ անոր հովանաւոր բարձանց ու բլրոց օղը. քալեմ նախահարց քալած ծաղկածին ձորակներուն և տուարածական տափերուն վրայ. ըմպեմ պայծառ առուաց և գետոց վտակներէն. զովանամ Եփրատայ ականակիտ աղբերաց մէջ. տեսնեմ ձորոխի և Արածանւոյ կամարակերպ փրփրահոսան ալիքը. լսեմ Երասխայ քարավազ կարկանասահանութիւնը. բրբեմ Մասեաց երկնածրար գագաթան, Արագածայ ծըծըմբածոր ծայրերուն, հայելանամ Սեւանայ և Փառաւանայ ապակեփայլ լճերուն վրայ. պրպլտեմ պատառեալ և մամուապատ պարսպաց մէջ. թաւալեցընեմ քանի մը յիշատակաց քարեր. նկատեմ մայրաքաղաքաց յատակը. հանդիպիմ քանի մը հսկայակերպ հողվերանքի. լամ քանի մ'անմոռանալի անձանց մոռացեալ գերեզմանաց վրայ. յաւիմ Շիրակայ գաշտին կիսաւեր եկեղեցեաց վրայ. ողբամ սգաւոր սրբութեանց վրայ. հառաշեմ դունայ և Անոյ աւերակաց վրայ. խորհիմ և տիսրիմ՝ ի վերայ անցեալ ցեղից, փառաց և ժամանակաց Հայութեան.

Բ. Թափութափ երկըթէ թեերուն տալով սկսաւ շարժիլ շոգիաքայլ նաւն. քանի մը ժամ չանցած՝ անցանք այն աստուածանկար ծովու բացուածքէն, որ Եւրոպայի և Ասիոյ մերձահամբոյր

շրթանց մէջ անսպառ կենդանութեան շունչի պէս կը խաղայ. այն աննման վոսփորոնէն, որ կրկին սիրելի էր ինծի, հայրենեաց տեղ հայրենիք ըլլալով, և իր ափանց վրայ զիս ընդունելով՝ ի լոյս կենաց. իմ որորանս ալ այն ալէծաղիկ եզերաց վրայ որորուած է։ Մտանք՝ ի Սեաւ ծով. Յոյնք երբեմն հիւրընկալ երբեմն հիւրատեաց սեպելով զայն՝ մէկ մ'Ակքսենոս մէկ մ'Եւքսինոս կոչեր են, կ'ըսեն. բայց ես աւելի ախորժեցի լսել անոնց՝ որ կ'ըսէին թէ մեր ազգահօր պապուն անուամբ կոչուած ըլլայ, որ կ'ըսուէր Ակքանաղ, իրը Ակքանաղեան ծով. վասն զի այս յաբեթածին նահապետս նախ մեր հայրենեացը մէջ բնակեր է, յետոյ այս ծովուն հարաւային եզերը. ները սփուեր է իր սերունդը, և անկից ալ անդին անցեր է յարեմուտս, ըստ ումանց մինչև՝ ի Գերմանացւոց աշխարհը։ Մենք այս կողմը թողլով՝ կը թուշէինք ալեաց երեսէն դէպ՝ ի մէկալ կողմը, ուսկից լոյս կու գայ. ատեն մը արեւուն լրւոյն հետ՝ իմաստութեան լոյսն ալ անկէ կու գար յարեմուտս. մեր աշխարհն ալ արևելքի վերջի դոներէն էր դէպ այն կողմը՝ ուր կ'երթայ արևն. և երբեմն սեփական անուամբ Արևելեան տուն կ'ըսուէր։ Փոքր Ասիա, որուն եղեղները հիմայ նաւէս կը տեսնեմ, երկու ծովուց մէջ (Ակքանաղեան և Միջերկրական) կամուրջ մը կը նմանի, միջասահման Ասիոյ և Եւրոպիոյ. ուր հազարաւոր տարիներէ ալ առաջ զրակից և գիմակից էին այն երկու աղքերն, որ հիմայ ալ այս երկրիս շատ ազգաց կամ ժողովրդոց մէջ առաջին ըսուելու արդիւնքն ունին, Յոյնք և Հայք։ Անոնց նախահայրն Յաւան՝ մեր նախահօր թորգոմայ հօրեղբայրն էր. պէտք չէ զլանանք իրենց երիցութեան պատիւը, շմոռնանք ալ մերձաւոր խնամութիւնը։ Նաւուն աջակողմը նստած՝ երբեմն պարզ աչքով, երբեմն հեռաղիտակով և աւելի շատ ալ մնտածեսութեամբ կը դետեմ փոքր Ասիոյ հիւսիսային եզերքները, կամ այս Սեւ ու Պոնտոս ծովուահարաւային ափունքը, որ շուտ շուտ կը

սահին կը փախչին, իրր թէ դու զմեզ քննելու համար չես եկած՝ ըսելով, փութա քու նպատակիդ: Եւ ահա անցանք Դափնուսիայ և Աքերուսիայ սարաւանդից դիմացէն (որք հիմա կ'ըսուին Քէֆքէն ատասը և Պապա պուռնու). որոց միջոցէն՝ ի ծով կը թափի արևմտեան դից գիմացէն (որք հիմա կ'ըսուին Քէֆքէն ատասը և Պապա պուռնու). որոց միջոցէն՝ ի ծով կը թափի արևմտեան Փ. Սիխոյ առաջին գետն՝ Սանգարիս, (Զէքարիա-սու), Գաղատիոյ կողմերէն իշնելով. և մէկմէկու ետևանց կ'երևան կ'անցնին ուրիշ հրուանդաններ, կարամբիս (Քէրէմմիէ), Ստեփանէ (Ստէփանա) և Սիւրիա (Ինձէ-պուռուն), որուն ցամաքը՝ շատ առաջ երկընցածէ՝ ի ծով գէպ՝ ի հիւսիս: Եթէ ասոր արելեան կողմը պատես՝ կը տանի խաղաղ գոդ մը, կամ պղտի ծովածոց մը, Ագ-լիման կոչուած. ուր շատ հին ատեն շինուեցաւ մեր ազգին արևմտեան անուանակոչութեամբ աւան մը՝ Արմենէ. որ թէպէտ պղտիկ և բանուկ տեղ չէր՝ բայց պարապորդ մարդ մը ուզեց չէնցընել և պարսպով ալ պատեց. ամենքը զարմացան ըրածին, և առակ եղաւ Յունաց մէջ ըսելն,

Որ այլ ինչ գործ ոչ ունի՝
Ածէ պարիսպ Արմենի¹.

Այս Արմենեան աւանիս մէջ հինգ օր հանգչեցաւ Քսենոփոն, 400 տարի Քրիստոսէ առաջ, երբ իր մնացեալ զընդովը Հայոց լեռներէն անցնելով կը դառնար իր հայրենիքը: — Ասկէ շատ հեռու և Տրապիզոնէն ալ անդին՝ կայ ուրիշ Արմենէ աւան մը, ուր աւելի Հայութեան նշաններ ալ կրնանք գտնել՝ եթէ հանդիպինք:

Արմենէի ծովածոցին դիմաց և մօտ կայ լեզուածե բոլորեալ ցամաքակղեակ մը (Պօղ-Թէփէ), որուն վրայ կանգնած է Սիւնու հին քաղաքն Յունաց Պափլազոնիոյ, երեք կողմէ ծովը դիտելով: Իր ամենէն նշանաւոր յիշատակն է Դիոգինէս Շնական փիլիսոփայն, եթէ սրահանճար սրալեզու՝ բայց և աղտոտ, ա-

նամօթ և արհամարհուտ մարդ մ'ալ փիլիսոփայ կրնայ ըսուիլ. գոնէ երջանիկ էր ուրիշներու կարօտ ըլլալ չուզելով. ինչուան Աղեքսանդր ինքնակալին շուքն ալ իրեն ծանր եկաւ: Միհրդատ՝ մեր միջին Տիգրանայ քեռայրն՝ իրեն աղքունի քաղաքաց մէկն ըրաւ զՍինոպ, որ անկէ առաջ և վերջն ալ շատ ծաղկեցաւ շէնքերով և վաճառականութեամբ. և գրեթէ Բիւզանդիոնի և Տրապիզոնի մէջ ծովուն իշխան էր. հիմայ հնութեան նշխարքներն անգամ չեն երեիր. բայց միշտ կը մնան հրաշալի տեպն և գիրք բնութեան: Այս քաղքէս էր սուրբ պարտիզպանն Փոկաս, պաշտպան ալէկոծելոց, և քրիստոսական միամնութեան փիլիսոփայ մը, անհամեմատ գերազոյն քան զԴիոգինէս և քանի մը Դիոգինէս:

Սինոպէն 50 մղոնի չափ անդին՝ ծովեղերեայ շէնքերէն աւելին շանսաւոր բան մ'է Ալիւ (Գզըլ-ըրմագ) գետոյն թափուածքն՝ ի ծով. այս զետս Փոքր Ամիոյ գետոց մեծագոյնն է. իր աղքերակունքն Փոքր ու Մեծ Հայոց միջասահման կըրնան ըսուիլ. Քրիստոսի թուականէն 2000 տարի առաջ ասոր ափունքն սկըսան հայերէն լեզու լսել, երբ Արամնահապետ մեր՝ նուածելով իրեն հովիտները՝ իր Մաժակ կողմնակալին ձեռքով շինել տուաւ քաղաք մը՝ որ անոր անունն առաւ, յետոյ կոչեցաւ՝ ինչպէս հիմայ ալ կեսարիա: Եթէ այս զետս, եթէ Խոհիս (Եէշիլ-ըրմագ.), որուն բերանն այլ Սամսունէն քիչ մ'անգին կ'ինկնայ, եթէ Թերմոդոն (Թէրմէ) և թէ Ճորոխ Խակ, որ Սև ծովուն հարաւային կողմը թափող գետոց զվասաւորքն են, ամենքն ալ արևելքէն գէպ յարեմուտք կը վագեննախ, և մեծ գոդ կամ աղեղ մը ձևացընելով նորէն գէպ յարելք կը դառնան, և յետոյ գէպ՝ ի հիւսիս կ'երթան՝ ի ծով. կ'երեսի թէ խիստ մեծ և ուժով երկրական ցնցմամբ և ձեւացմամբ մը այս գիրքս առեր են: Խոխս երկու թէ ունի, արևելազոյնն Գայլ կ'ըսուի, և հովտին զլուխն ինչուան հիմայ Գեղգիշդ կ'ըսուի յայլազգեաց, որ

¹ Օսդիս Էրզոն ուտէն ինէն
Արմենին էդիխիսէն:

է Գայլ-գետ ըստ մեզ, և է բնիկ գաւառ
կամ երկիր Փոքր Հայոց, արտաքոյ Ա., Բ.,
և Գ. Հայոց : Առանց երկիրները տեսնե-
լու՝ զանոնք դալարացընող և գիրացընող
գետոց յաւելուածները տեսնելով, և ի-
բրև մեր հայրենի սահմանաց յառաջըն-
թաց նուիրակներ ողջունելով՝ անցանք
շատ հրուանդաններու առջևէ, Ենոյեայ
(իւնեէ), Պոլեմոնիոնի (Ֆածա), Յա-
սոնի (Եասուն), Վոռնայ (Վունա պուռ-
նու), և այլն. Խողուցինք զկեռասոս (Քի-
րէսուն), Տրիպոլիս (Թիրէպոլի), Ո-
փիոս (ՕՓ), ՈՒիզոս (ՈՒիզէ), և հա-
սանք՝ ի մայրաքաղաքն Պոնտոսի՝ ի Տրա-
պիզոն, ուր՝ ծովուն հրաժարական բա-
րե տալով՝ ելանք՝ ի ցամաք . ասիական՝
միանդամայն և հայկական հողն ալ ող-
ջունելու :

Գ. Տրապիզոնի քաղաքական, աշխարհագրական և տուժառական դիրքն և դեպքն, և մերազգեաց հոն գաղթականութիւնն ալ՝ գրեթէ ամենուն ծանօթեն. թէպէտ կ'արժէր որ ալ աւելի ծանօթ և հոչակաւոր ըլլար հիմայ այնպիսի քաղաք մը՝ որ Սեւ ծովուն ափանց վրայ ատենաք առաջին քաղաք, և միշտ ալ՝ առջինէն քիչ ետև գտուած է, թիւղանդիւնի հակառակորդ և անոր հաւասար՝ թէ աշխարհագրական լայնութեան աստիճանաւ, թէ հեռաւորութեամբ Սեւաւ ծովուն աննկիւնէն (արևելքէն, ինչպէս կ. Պօլիս արևմտստքէն), և թէ զանազան ժողովրդոց և լեզուաց բնակարան կամ իջևան ըլլալոմն՝ 'ի հին ժամանակաց. ինչպէս Խաղուիք, Պոնտացիք, Հայք, Եղերք, Յոյնք, և այլն. որով յայտնի ալ չէ թէ որ ազգին բնիկ քաղաք էր: Հին աշխարհագրաց տեղադրութեան նայելով՝ Մակրօնիք կամ Մակրունիք ըսուած ցեղին սեփական կ'երեսի. բայց Յոյնք Սինոպէն գաղթական զըրկելով շիներ շէնցուցեր ու տիրեր են անոր՝ երկար ատեն, ինչպէս որ Հռովմայեցւոց տիրապետութենէն վերջն ալ նորէն Յունաց ձեռքն անցաւ, և ատեն մը կայսերանիստ ալ եղաւ, և յետ կոստանդնուպօլիսի առման՝ ընկաւ 'ի ձեռս Օսմաննեանց: Բայց յառաջ քան դաշխար-

Հակալութիւն Հռովմայեցւոց և զօրաց
նալ Պոնտոսի թագաւորաց, գուցէ և
յառաջ քան զԱրշակունեաց թագաւո-
րութիւն՝ առեն մը հայկական ձեռք ալ
հասած էր 'ի Տրապիզոն. Ստրաբոն աշ-
խարհագիրն կ'ըսէ յայտնապէս, թէ
Փոքր Հայոց նախարարքն մինչև 'ի Տրա-
պիզոն և 'ի Փառնակիա (Քիրէսուն) կը
տիրէին: Երբ Վաղարշակ Հայկազանց
տէրութիւնը նորոգեց և սահմաններն
ընդարձակեց, Սեւ ծովու արևելեան
հարաւային ափանց ալ առանձին կող-
մակալ մը դրաւ, հայկազն Տողք հրս-
կայն Պազքամեան. թէպէտ և ամժոռն
'ի Տրապիզոն ըլլան յայտնի կամհաւա-
նական չէ. Ես կարծեմ թէ աւելի արե-
ելակողմն էր, Պորդանիս կամ Պրիւդա-
նիս (Ֆօրդունա) գետոյն բերնին քով,
ուր որ ինչուան հիմայ Արտաշին հայտ-
նուն աւանն կայ, անոր քով ալ Արմենի
աւանն էր, հիմայ Օճա գեղն: Այս գե-
տակիս ձորահովտին մէջ ալ կան ուրիշ
հայանուն տեղիք և վտակք: Ասոր ե-
զերքը տեսաւ Արրիանոս աշխարհազիր,
Բ գարուն սկիզբը, Անդիալեայ թագաւո-
րին արքունիքը. — միթէ սա չէր զաս-
տակերտ՝ նոյն ինքն Տողքայ, որ Անգե-
ղեայ կ'ըսուէր, ըստ պատմութեան խո-
րենացւոյ, « վասն առաւել ժահադի-
մութեանն » . և կը պատմուէր ալ անոր
համար, թէ « Յեզերս ծովուն Պոնտոսի
« գիտեալ նաւաց թշնամեաց՝ դիմէ 'ի
« վերայ. և 'ի խաղան նոցա 'ի խորն 'ի-
« բրե ասպարէզս ութ, և սա ոչ ժամա-
« նեաց նոցա. առնու ասեն վէմս բլրա-
« ձես և ձգէ զկնի, և 'ի սաստիկ պա-
« տառմանէ ջուրցն՝ ընկվմին նակք ոչ
« սակաւք. և ամբարձումն ալեացն որ
« 'ի պատառմանէ ջուրցն՝ վարէ զմնա-
« ցեալ նաւսն բազում մղոնս: Ո՛հ, կա-
« րի է առասպել, այլ և առասպելաց
« առասպել ». — նման միւս առասպե-
լին՝ որ կ'ըսէր Տողքայ համար, « բուռն
« հարկանել զորձաքար վիմաց ձեռքք ..
« և ճեղքել ըստ կամաց ... և քերել
« ըղբնամքը իւրովք արծուիս և այլս
« այսպիսիս » : — Արգեօք այս առասպել-
ները՝ զուարձութեան համար՝ քիչ մ'ալ

տուած տանինք, և Տորքայ նետած քարերն ալ վինտուենք Պոնտոսի ալեաց մէջ. — զոնէ կիւնեէի և Պաթումի բնակիչն կ'աւանդեն, թէ իրենց ափունքէն ոչ շատ հեռու՝ ծովուն խորերը՝ մեծ քարաժայուի կտոր մը կայ, վրան ձկանց պատկերներ գծուած (քերեալ). որուն՝ ամեն տարի օր մը մօտ կու գան ձկունք, բոլորտիքը կը պատին թափօրապէս, և կ'անցնին կ'երժան։ Եթէ պարզամիտ տեղացիք խորենացի կարդալու ըլլային՝ անշուշտ Անգեղեայ Տորքայ անուամբ պիտի կոչէին այն ձկնապաշտեալ ձկնաքանդակ ծովասոյզ քարաժայուը։ — Բայց եթէ իմ հայրենասէր հետևողս չի հաւնիր այս քարաժեռիս, ուրիշ մ'ալ նշաննենք, գուցէ պակաս առասպելեալ և ոչ պակաս ախորժելի, և առջինին ժամանակակից. վասն զի նոյն Տորքը իշխանացընող վաղարշակայ որդին և յաջորդն՝ Արշակն է ասոր հեղինակն ալ։ Ասիկայ երբեմն « պատերազմելով ընդ Պոնտա « ցւոց, և նշանակ եթող յեղը ծովուն « մեծի՝ զնիզակն իւր բոլորատէգ, որ էր « արեամբ զեռնոց միսեալ. ձգեալ՝ ՚ի « հետևակուց՝ խորագոյնս նստոյց յեր. « կանաքար արձանին՝ զոր կանգնեաց՝ ՚ի « ծովեղըն։ Զայս արձան՝ բազում ժամանակս պատուեցին Պոնտացիք՝ որպէս « զառ՝ ՚ի յաստուածոց գործ։ Իսկ՝ ՚ի գուաշն Արտաշիսի (որդւոյն Արշակայ) « միւսանգամ ընդ Պոնտացիս՝ ընկե. « ցեալ ասեն զարձանն ՚ի ծով »։ . . .

Գուցէ այս առասպելաց վրայ չզարմանալով իմ վրաս զարմանայ ընթերցոյն, թէ ինչպէս փութալով ասիական և հայկական հողը կոխելու՝ դեռ կը տնտնամ ծովուն եզերքը։ — Ա՛հ, ծովուն ծվիքը շատ ծալլուն պլլուն են. և ով որ անոր ծոցը ծնած է՝ չի կրնար դիւրաւ բաժնուիլ անկէ. մանաւանդ երբ առաջին անգամ, և երկար ատենի համար՝ պէտք ըլլայ հեռանալու ծովէ, հրաժեշտն ալ երկար կը քշէ։ Տրապիզոն, եթէ երբեմն հայկական ձեռաց տակ ալ եղած ըլլայ, բնիկ հայկական կալուած չսեպելով, և չախորժելով ալ քաղաքական կամ ուրիշ տեսչութեանց խնդիր.

Ներ և ձայներ լսելու, հոն կեցած քիչ օրերուս մէկ մասր ծովեղերքը անցուցի. անոր զարմանալի ձայները լսելու, որ ոչ մէկ ազգի լեզուին կը նմանին՝ բայց ամենուն ալ հասկանալի են. — ամենուն՝ որք սիրտ ունին լսող՝ քան թէ ականջ. — ասկէ ետև ցամաքի մէջ պիտի որոնէի նախնեացս յիշատակները. հիմայ հոսայս անկայուն աննիշ աննշխար ալեաց վրայ ալ փափագեցայ հայկական նիշ մը տեսնել, որչափ ալ դժար կարծուեր տեսնելն։ — Եւ ահա տեսայ որ մեր քիչ մ'առաջ յիշեալ թագաւորաց եսքինն՝ Արտաշէս, իր հօրմէն աւելի կը հրամմէր այս ծովերուս, և կը յանձնէր իր փեսային Միհրդատայ՝ « զկողմնակալութիւն « հիւսիսային լերանցն և Պոնդոս ծովու ». և յետոյ՝ « նուաճեալ զցամաքս միջոցաց « ծովուցն երկոցունց (Պոնտոսի և կազմակեց)՝ լնու զովկիանոս (Միջերկրական « ծով ») բազմութեամբ նաւաց, ծաւ « ուայեցուցանել կամելով զբոլոր արեւ « մուտս ». այնքան անտառներ տաշելով՝ շատցուցեր էր նաւերը, որ « յել « լեսպոնտոս և ՚ի թրակէ՝ զտարերացն « փոխեաց զբնութիւն. ծովագնաց ընդ « երկիր բերեալ լինէր, և ընդ ծով՝ հետեւակելով. թետալացւոցն սպառնալով, « և համբաւն հիացուցանէր զհելլենաւ « կանն. կործանեաց զլակեղեմնացիս, « փախոյց զփոկէացիս. Լովկիացիք ան « ձնատուլք եղեն. Բիւզանդացիք մասն « են ՚ի կազմածոյ նորա. առ հասարակ « նման ելլագա մատուցանէր զահն »։ Այս մէկ հատիկ Հայոց թագաւորն է՝ որ սեւ յօնքերը շարժեց ճօճացուց Աեւու ծերմակ ծովերուն վրայ. ցամաքասուն աղգը՝ յանկարծ ծովակալ ըրաւ. բայց, « աւաղ փառացն անցաւորի »՝, ինչպէս պատմիչն կը կանչէ. վասն զի ինքն հազիւ թէ ծովակալ՝ իսկոյն ծովակուլ եղաւ. վասն զի « ոչ զիտեմ յորպիսի « ազգմանէ՝ ահազին իմն աղմուկ լեալ « չփոթից, բազմութեան զօրացն զմի. « մեանս կոտորեալ. իսկ Արտաշէս՝ փաւացեալ մեռանի, որպէս ասեն, յիւրոց

զօրաց » . և մեռանի՝ ոչ՝ ՚ի ցամաքին , այլ
՚ի ծովու սահմանին , ՚ի ծայր արևմտից
իշխանութեան՝ զոր ճառայեցանել
կամէր , Յունաստանի հրաշակերտ Ա-
թենական ափանց զիմաց , անոր և Եւ-
րիու երկայնաձիգ կղզւոյնմիջոց՝ փոքրիկ
կղզեկի մը վրայ . Հոն , այն զարմանալի
ջրոց անդնդապտոյտ յորձանաց մէջ ,
ուր որ , կ'ըսեն թէ իրմէ 200 տարի ա-
ռաջ , իմաստասիրաց իմաստնագոյնն Ա-
րիստոտէլ՝ այն ջրերուն վազուածքին
պատճառը փնտուելով և չգտնելով ինք-
զինքը մէջը նետած ըլլայ , « Ծով , ես
չկրցայ զքեղը ըմբռնել , դու զիս բռնէ » :
— Բաղդաւոր կ'ըլլար Արտաշէս՝ եթէ
միայն ծովուն հետ կոռուելով յաղթուէր
և ալիքներէն կլլըւէր : — Հայկական
նաւատորմիղն հոն կոտրեցաւ . բայց
ուր արդեօք դարձան մնացորդքն . —
կ'երեխ թէ նորէն մոտան՝ ՚ի Մարմարա , և
անցնելով՝ ՚ի Բիւզանդիոնէ և՝ ՚ի Թրա-
կեան նեղուցէն՝ եկան ելան հոս՝ ուր հի-
մայ եսս եմ , կամ առջի ցուցած տեղը , Ա-
թենայ և Վիծէի միջոց , Պորդանիս (գու-
ցէ վարդան) գետոյն բերանը . գուցէ
նոյն ինքն Արտաշիսի անուամբ՝ վերոյի-
շեալ աւանինքով . ուսկից գար վեր ելած
երկիրն ալ՝ հիմակուան Համշինու կող-
մերն՝ գուցէ այսնաւաշինութեանց նիւթ-
և տեղի տալուն համար է՝ որ Նաւեաց-
երկիր կոչուած է ատեն մը , ինչպէս ՚ի
գիրս հանդիպած եմ . և գուցէ ասոր
համար ալ այլազգիք նոյն կողմի լեռնե-
րուն Զէնկէլիստան կ'ըսեն . և թերեւս
այն հայկական իշխանութեան ատեն-
ներէն մնացած է այդ կողմի գետակ-
ներուն մէկուն անունն ալ՝ Ասպես ,
(որ թուի Գալոյ-բողամուն Յունաց) . և
(յետին գուցէ մ'ալ) , այդ Ասպետ ա-
նունն ալ եկած ըլլայ Անդեղեայ նա-
հապետին թունէն , զոր այդպէս կոչէ
պատմիչ մը :

Հիմայ յառաջ քան զերեսս ՚ի ցամաք
դարձնել՝ նայինք վերջի անգամ մ'այլ
այն համատարած ծիծուն ու ծփուն
երեսաց վրայ , որ երբեմն սիրոյ հայելի՝
երբեմն մահու վիհ կը դառնան . այն
ծածկուած գծին վրայ՝ զոր ես երեք

օրուան մէջ կրակով կտրեցի՝ ՚ի Բիւ-
զանդիոնէ մինչև ՚ի Տրապիզոն , և զոր
Արտաշէս՝ կովկասու և Կողքիսոյ մայրի-
ներովը ծածկեց , քանի մը տարի այդ
երկու մեծ քաղաքաց ալ տէր ըլլալով .
400 տարի յառաջ քան զկոստանդիա-
նոս : Այդ մշտապատառ և մշտակարկատ
միջոցին վրայ՝ բարակ զիծ մ'ալ կայ
մեղի հետաքննելի , զոր ոչ այնքան ա-
ռասպելն որբան սէրն հիւսած է : կը
պատմէ մեր ժե դարու վարդապետաց
մէկն , Յակոբ , որ հաւանօրէն զիտնա-
կան Ղրիմեցին է , իր՝ և Տրապիզոնի վեր-
ջին կայսերաց ատեն հանդիպած դէպք
մը , զոր աշխայժ երիտասարդ բանաս-
տեղծ մը կըրնար հոչակել է անդրի
տարաբաղդ դէպքէն աւելի : կայսեր
առջեւ ի Տրապիզոն գովեցին հայ պա-
տանի մը , թէ զարմանալի աննման լո-
ղակ է , ծովուն ոչ ընդարձակութենէն
կը վախէ ոչ խորութենէն . երկու թեե-
րովը կըրնայ Տրապիզոնէն ինչուան կոս-
տանդնուազօլիս երթալ՝ եթէ արժանա-
ւոր պէտք մ'ըլլար : — Եթէ կարենայ այն
ճամբան լրդալով ընել և դառնալ , ըսաւ
կայսրն , ինծի փեսայ կ'ընեմ այդ պա-
տանիդ : — Իսկոյն Սեւ ծովուն ալիքն
մարդարտաշար դիպակ դարձան պա-
տանւոյն առջեւ . նետուեցաւ ջրերուն
մէջ : կայսրն հրաման տուաւ որ գիշեր-
ները անոր առջնէն նաւով լոյս տանին ,
որ ճամբան չկորուսանէ . — սիրոյ լոյսն ա-
ւելի վառ և պայծառ էր . — ճղքեց ալիք-
ները , լողաց գնաց « Հազար միլ Հազար
« աւուր ճանապարհ » , կ'ըսէ պատմիչն ,
և ետ դարձաւ նոյնպէս : Բայց , ով չար
և վատ նախանձ , հակառակորդ սիրոյ .
կայսրն գաղտուկ պատուիրեր էր՝ որ ե-
թէ իր և շատերուն կարծիքէն վեր յա-
ջողութեամբ՝ պատանին պատուէ՝ ան-
դունդները և « թէ դառնայ , նա՝ զնաւն
« ՚ի բալազօղն տուք , որ մեռանի » : Այս-
պէս ըրին վատ հրամայողին վատթար
հպատակն . այն նորահրաշ ծովայալ-
թը՝ յորձանաց մոլեգին շրջաններուն և
կոյր ճամբաներուն մատնեցին . թուցու-
ցին թեերուն ջաջուռ ջիւերը . և մինչդեռ
յետ « Հազար միլ Հազար աւուր ճանա-

«պարհի», Պոնտոսի ալեաց կանաչ կնիւններով մազերը պսակած պատահնին՝ Պոսիդոնին աւելի ուժով մը պիտի ցատքէր՝ի ցամաք՝ կայսեր և անոր գըստեր ձեռքը բռնելու, նոյն յետին սեւ ու կապոյտ կոհակներուն վրայ՝ նոյն կնիւններուն մէջ սպիտակ ծրարի մը պէս տարածուած մնաց, խաղալիկ անհոգ ալիքներու, և աւելի անհոգ մատնիչներու. գուցէ և ևս աւելի անհոգ մէկու մ”ալ, որ հարս պիտի ըլլար. վասն զի պատմութիւնն՝ ոչ ասոր համար երովայ դիպուածը կը պատմէ, և ոչ մեր պատանւոյն համար՝ Պալինուրայ վերջին բազդը՝ Նախանձն իր որսը թողուց գնաց. Սեւ ծով քանիներու արև չէ սեցուցած. ով պիտի յիշէ մեր քաջալուզակ պատանին՝ որու անունն ալ չհասաւ մեզի: — Սակայն նաւազն աննախանձէ. նաւաստիք՝ իրենց համարուեսար չեն մոռնար. միայն անոնք եղան որ Տրապիզոնի ծովափանց վրայ նստած՝ ողբացին և երգեցին այս չայ ծովային նահատակն. «Եւ նաւորդք, կ’ըսէ յիշատա. «կագիրն, երգ՝ի բերան աւեալ՝ ողբան «զնա. Արմէն, Արմէն, գոյեն. վայ և «եղուկ, ասեն»: — Եթէ այդ երգդ չոմերոսի և Վիրզիլեայ արուեստը չունէր, չեմ տարակուսիր որ աւելի ալ սրտառուչ էր. և գուցէ իմ հոս այս եաքի լսած ծովերու և հովերու խորհրդաւոր փափսուքին մէջն ալ՝ այնպիսի երգոյ մը հեռաւոր և վերջին արձագանգքն ըլլան. ուսկից ահա կէս յօժար և կէս տխուր կը հեռանամ կ’երթամ, ապահովութիւն մաղթելով ճամբորդաց՝ թէ ծովու ալեաց վրայ, թէ ցամաքի: ...

Հ. Դ. Մ. Ա. Խ. Ե. Ա.

Իլլ շարունակուի:

1 Պալմնուր՝ ըստ Վերգիլիոսի, Ենէասայ նառուն նաւապետն էր, և մթան ու մրցի ատենընկու մեռաւ՝ի ծովու. մարմինն քանի մ’օր ալեաց մէջ ծփալէն ետեւ՝ի ցամաք ծփուեցաւ և անթաղ մնաց. մինչև որ Ենէաս՝ դժոխոց այցելութեան իջած ատեն՝ լսեց Պալմնուրայ ողբը և թաղել տուաւ: Այն ատեն հեթանուպք կը կարծէին՝ որ որոնց մարմիններն անթաղ մնան՝ հոդինին ալթափառական և վատագին կը մնան:

ՅԱՂԱԳՍ ՄՇԱԿՈՒԹԵԱՆ ՊՏՂԱՑՈՒ ՆԱՐՈՒՑ

4

Բուշոց սերնդեան համար հարկացոր եղան ճննդարար գործարաններ:

Աստի յառաջ երկու առանձին յօդուածներու մէջ՝ի քննութիւն առինք բուսոց աճման և բազմաւորելուն համար հարկաւոր եղած գործարանները, և ըսինք թէ արմատի ձեռքով կ’աճին, ծաղկի և սերման ձեռքով կը բազմաւորին. այսուհետեւ կը մնայ յաջորդաբար խօսիլ թէ ինչ եղանակաւ կ’աճին, և ինչ եղանակաւ կը բազմաւորին:

Բոյսերը ինչ եղանակաւ կ’աճին:

Ծլիլը (Germination): Երբ սերմ մը (կուտ, կորիզ, հատ, ունդ) ծլելու նպաստաւոր վիճակի մէջ կը դրուի, ամեն բանէ առաջ թացութիւն ծծելով կ’ուռի, ետքը կը ճեղքուի, ունկերը կը մեծնան, կճեպը կը պատառի, և վերջապէս պանդիրի ճերմակ ու բրնձանըման ծայրը կ’երկայնի ու կճեպէն գուրս կ’երեսի: Եթու այսորիկ ծինը ներփին շարժում մը կրելով կը շտկուի, և ինքն ալ կճեպէն դուրս կ’երկայնի: Ինչպէս յառաջազոյն ըսինք՝ պանդիրը հողի տակ՝ և ծինը հողէ դուրս կը դիմեն: Պանդիրը որչափ աւելի հողի մէջ մտնէ, այնչափ աւելի ծինն ալ կ’երկայնի ու հողէ դուրս կ’երեսի երկու ունկերով, և անոնց հետ միատեղ երկու նախածին տերևներով. ահա այս վայրկեանին ծլիլը լրացած է:

Սերմը ծլելու համար հարկաւորութիւն ունի ջուրի, օդոյ և ջերմութեան:

Ջուրը ոչ միայն սերմին վրայի կճեպն ու մաշկը կակղելով կը դիրացունէ շուտով բացուելու, այլ և կը լոգացունէ և կը լուծէ միզն և ունկերու մէջի մնուցիչ հոյզերն, որք և առ սակաւ սակաւ առաջին կերակրիկը կը մատուցանեն ծինին: